ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ 13 փետրվարի 2024թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 17-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Արտակ Մաթոսյանը, Լուսինե Ավետիսյանը, Ալվարդ Համբարյանը, Գևորգ Մարգարյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Նունե Էիտիբարյանը, Վարդուհի Թումանյանը,Արկադի Ասատրյանը, Աննա Ալթունյանը, Կարեն Սարգսյանը, Սարգիս Փիլոյանը, Սամվել Սիմոնյանը, Վաչիկ Գրիգորյանը, Վահե Ղազարյանը, Վարազդատ Մխիթարյանը, Սասուն Ասատրյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 10 անդամներ՝ Հայկ Սիսակյանը, Կարինե Դիլաքյանը, Արամայիս Փիլոյանը, Զալիկո Համբարյանը, Համլետ Մազմանյանը, Գագիկ Սահակյանը, Նարինե Հակոբյանը, Կարեն Գասոյանը, Մանուշ Աթյանը, Գուրգեն Փիլոյանը /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանը, նույն բաժնի պետի տեղակալ Գայանե Չոբանյանը, վարչական ղեկավարներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի նիստի օրակարգի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 13-ի հերթական նիստի օրակարգը.

1)Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի թիվ 139-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

/զեկուցող՝ Վ.Ապրեսյան/

2) Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները հաստատելու մասին

/զեկուցող՝ Վ.Ապրեսյան/

3)Սպիտակ համայնքում գործող մանկապարտեզների՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների մանկապարտեզի վարձավճարի արտոնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

4)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

5)Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

6) Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասերից աճուրդով օտարելուն համաձայնություն տալու և մեկնարկային գին սահմանելու մասին

/Զեկուցող՝ Ե.Գրիգորյան/

7)Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին

/Զեկուցող՝ Գ.Զոբանյան/

8)Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող հողամասի նպատակային նշանակությունը փոխելու և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում փոփոխություն կատարելու մասին

/Զեկուցող՝ Գ.Զոբանյան/

Օրակարգի հարցերի վերաբերյալ առարկություններ, առաջարկություններ չեղան:

Օրակարգը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (17) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Քվեարկությունից հետո ավագանու անդամ Սամվել Սիմոնյանը հեռացավ նիստերի դահլիճից:

1.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի ԹԻՎ 139-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ.ԱՊՐԵՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 12-ի «Սպիտակ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 139-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն 1-2 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Վ.ԱՊՐԵՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 77-րդ հոդվածի 3-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Սպիտակ համայնքի սեփականության գույքագրման փաստաթղթերում կատարված փոփոխությունները՝ համաձայն հավելվածի:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ՝ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա.ՖՐԱՆԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Սպիտակ համայնքում գործող մանկապարտեզների՝ կրթության և զարգացման առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին մանկապարտեզի վարձավճարը վճարելու համար տալ արտոնություն՝ ազատել նրանց սահմանված վճարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մարտի 1-ից:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

4.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ե.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23012024-06-0043 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-061-0066-0010 կադաստրային ծածկագրով 0,01315 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, բնակելի նշանակության օժանդակ շինություն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 37 319,7 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 283,8 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

5.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՐԹԱԳՅՈՒՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ե.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23012024-06-0042 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին որոշում է.

1. Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի Հարթագյուղ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-061-0066-0011 կադաստրային ծածկագրով 0,07527 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը, բնակելի տուն կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 320 424,39 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 425,7 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (2)

6.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻՑ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ե.ԳՐԻԳՈՐՅԱՆ)

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 67-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 03012024-06-0052 վկայականը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Համաձայնություն տալ Սպիտակ համայնքի վարչական սահմաններում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0043-0060 կադաստրայինծածկագրով 0,01195 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը, պահեստ կառուցելու նպատակով, աճուրդով օտարելուն:

2. Հողամասի աճուրդով օտարման մեկնարկային գին սահմանել 145 909,50 ՀՀ դրամ (1 քառակուսի մետրը 1221 ՀՀ դրամ):

3. Աճուրդում հաղթող ճանաչված մասնակցից համայնքի բյուջե գանձել հողամասի պետական գրանցման ծախսերը:

Հարցը դրվեց քվեարկության:

Վարդուհի Թումանյանը և Գևորգ Մարգարյանը ձեռնպահ քվեարկեցին հարցին:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (14) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (2)

7.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՑՈՂ՝ Գ. ՉՈԲԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 1 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/111.6/00912-2024 գրությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի «Սպիտակ ք., Չարենցի փողոց թիվ 56» հասցեում գտնվող՝ Հակոբ Լենդրուշի Արշակյանին սեփականության իրավունքով պատկանող 06-006-0130-0107 կադաստրային ծածկագրով 0,09843 հեկտար մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություն:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

8.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՍԽԵՄԱՅՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Գ.ՉՈԲԱՆՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 31-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1918-Ն որոշման 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2001 թվականի օգոստոսի 13-ի թիվ 599 որոշմամբ ստեղծված Հողերի ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 2 դրական եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2024 թվականի փետրվարի 1-ի թիվ 01/111.6/00917-2024 գրությունը՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքի վարչական տարածքում գտնվող, Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող, 06-006-0201-0003 կադաստրային ծածկագրով 0,69933 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր հողատեսքի հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի:

2. Սպիտակ համայնքի վարչական տարածքի հողերի օգտագործման ժամանակավոր սխեմայում կատարել համապատասխան փոփոխություն:

Հարցը դրվեց քվեարկության:

Վարդուհի Թումանյանը, Գևորգ Մարգարյանը և Նունե Էհտիբարյանը ձեռնպահ քվեարկեցին հարցին:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (13) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (3)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՎԱՐԱԶԴԱՏ ՄԽԻԹԱՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ
ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ
ԱՐԿԱԴԻ ԱՍԱՏՐՅԱՆ
ՍԱՍՈՒՆ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ